ՀՏԴ 331.5(479.243)

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Վիկտորյա Առստամյան
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Արցախ

Անոտացիա

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում ծառացել է գյուղաբնակների զբաղվածության հարցը: Գործազրկության մակարդակի կրճատումը երկրի տնտեսության աշխուժացման արդյունք է, ինչն էլ կանխատեսում է բնակչության կենսամակարդակի բարձրացում, որից էլ բխում է հիմնախնդրի արդիականություն ու նրա կարգավորման կարևորությունը: Հոդվածում առաջ են քաշվել աշխատանքի շուկայի տարբեր բնութագրիչների ցուցանիշները՝ այդ թվում բնակչության քանակը, տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ ըստ տարիքի, զբաղվածներն ու գործազուրկները, զբաղվածության քաղաքականության սկզբունքները, գյուղական վայրերում աշխատաշուկայի առանձնահատկությունները: Հիմնավորվել է աշխատաշուկայի կարգավորման անհրաժեշտությունն ու առաջարկվել խնդրի լուծման որոշ ուղղություններ:

Բանալի բառեր՝ *աշխատուժ, աշխատաշուկա, զբաղվածություն, գործազրկություն, թաքնված գործազրկություն, գյուղաբնակներ:*

Ցանկացած տնտեսական համակարգ իր շտկումները յուրովի է բերում տնտեսության տարբեր հատվածներում և անցումը շուկայական տնտեսական համակարգին, իր հետ բերել է ծավալուն փոփոխություններ: Այդ ամենից զերծ չմնաց նաև զբաղվածության համակարգը, թե՛ սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների տեսակետից և՛ թե ժամանակակից շուկայական համակարգի պահանջներին չնհամապատասխանելու տեսակետից: Երկրում ստեղծված քաղաքական վիճակից ելնելով՝ անցման գործընթացն ավելի էր բարդանում: Կոլտնտեսությունների քայքայումից հետո միառժամանակ գյուղական բնակչությունը անցման այդ սրությունը չէր զգում, սակայն 90-ականների վերջին այն հակառակ ընթացք ստացավ ու բնակչության եկամուտները գյուղերում կտրուկ անկում ապրեցին: Դա է պատճառը, որ վերջերս պետության սոցիալ-տնտեսական տարբեր ծրագրեր ուղղվում են գյուղերի զարգացմանը, որն էլ ենթադրում է գյուղաբնակ աշխատաշուկայի զբաղվածության ապահովումը: Խնդրի սրությունն ընդգծվում է այն պարագայով, որ ԱՀ գյուղաբնակիչները կազմում են բնակչության 43,4%, հետևապես քաղաքաբնակների թիվը կազմում է 56,6%, սակայն 1926թ. պատկերը լրիվությամբ այլ էր՝ գյուղի բնակչությունը կազմում էր 93,4% ու քաղաքաբնակները 6,6%: Եթե սեգմենտավորում ենք բնակչությանն ըստ գյուղատնտեսությունում զբաղվածների, ապա տեսնում ենք, որ այն տարեցտարի նվազում է. 2015թ. 6053-ի դիմաց 2016թ. այն կազմել է 4865 մարդ, կամ 9,2%: [3; 10]

Աղյուսակ 1. *ԱՀ-ում զբաղվածների և գործազուրկների թիվն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի.* **[5;57-61], [2;18,21,23], [4;8]**

/հազար մարդ/

	Բնակչության թվաքանակը		Աշխատանքային ռեսուրսները		Տնտեսապես ակտիվ բնակչություն		Զբաղվածներ		Գործազուրկներ	
	2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
Ընդհանուր	**145,2**	**146,1**	**99,2**	**103,1**	**61,1**	**63,0**	**54,1**	**53,0**	**7,0**	**10,0**
Քաղաք	82,2	82,7	52,4	50,4	33,8	31,9	29,6	28,3	4,2	3,6
Գյուղ	63,0	63,4	46,8	52,7	27,3	31,1	24,5	24,7	2,8	6,3

Զբաղվածության քաղաքականություն մշակելիս երկրի կառավարությունը առաջ է քաշում մի շարք սկզբունքներ, որով էլ առաջնորդվում է ոլորտի կառավարումն իրականացնելիս: Եթե խորհրդային շրջանում այդ սկզբունքներին էին դասվում պարտադիր աշխատանքը, աշխատունակ տարիքի լրիվ զբաղվածությունը, ապա ներկայիս տնտեսակարգը առաջ քաշեց նոր սկզբունքներ, որոնց թվին կարելի է դասել

- աշխատանքի կամավորությունը և աշխատանքի ազատ ընտրությունը՝ բացառելով խտրականությունը
- սոցիալական ներառումն ու համերաշխությունը
- սոցիալական գործընկերությունը
- աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում տեղեկատվական համաչափությունը և թափանցիկությունը
- արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների հետևողական ապահովումը
- ըստ առաջնահերթությունների՝ պետական աջակցությունը
- զբաղվածության ծառայություններ մատուցող պետական և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների միջև մրցակցային, փոխշահավետ և կայուն համագործակցությունը:

Զբաղվածության համակարգը մնացած ոլորտների նման ևս կարիք ունի կարգավորման ու կատարելագործման, իսկ զբաղվածության պետական կարգավորման միջոցները ունենում են ուղղակի կամ վարչական ու անուղղակի կամ տնտեսական ազդեցություն: **[1;68]** Վարչական միջոցները ներառում են նոր աշխատատեղերի ստեղծումը, աշխատողների վերապատրաստման ծավալների ընդլայնումը, նվազագույն աշխատավարձի մակարդակի սահմանումը և այլն: Իսկ տնտեսական միջոցներով զբաղվածության պետական կարգավորման համար պետությունը խթանում է տնտեսվարող սուբյեկտների ներդրումային ակտիվ գործունեությունը՝ տրամադրելով հարկային արտոնություններ և այլն: Մի խոսքով վերջինս ուղղված է տնտեսական ձևերի պահպանմանը և ենթադրում է մակրոտնտեսական լծակների ազդեցությունը:

Ամփոփելով վերոնշյալ տեսական փաստերը՝ նշենք, որ աշխատանքի շուկայում առկա են մի շարք առանձնահատկություններ, առավելապես գյուղական վայրերում, օրինակ, գյուղատնտեսության ոլորտում

- աշխատողների աշխատավարձի չափն ավելի ցածր է,
- զբաղվածության այլընտրանքային տարբերակները սակավ են,
- առկա է անչափահասների աշխատանքի օգտագործումը և այլն:

Վիճակագրությունից ելնելով՝ մենք չենք կարող ստանալ գյուղաբնակների զբաղվածության իրական պատկերը, քանի որ այնտեղ առկա է «թաքնված գործազրկությունը»: Հողերի սեփականաշնորհումից հետո գյուղացին մնացել է իր հողակտորի հետ մեն-մենակ: Հաշվի առնելով, որ որոշ տնային տնտեսություններում տարեցներ են, չունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ ու հմտություններ, իրենց ունեցած հողակտորը չեն մշակում՝ արդյունքում մեր վիճակագրությունը նրանց համարում է սեփականատերեր, ովքեր ունեն սեփականության օբյեկտ ու կարող են դրա դիմաց ստանալ եկամուտ՝ մնալով ինքնազբաղվածների կարգավիճակում: Լավագույն դեպքում նրանց հաջողվում է մշակել հողամասը՝ սեփական պահանջները բավարարելու համար: Սակայն բնակլիմայական պայմաններից ելնելով՝ նրանց ստացած արդյունքը միշտ չէ, որ արդարացնում է, և, ինչպես Մարքսն է նշել, նրանք համալրում են «թաքնված գործազուրկների» շարքերը:

Աղյուսակ 1. *ԱՀ-ում զբաղվածության ցուցանիշները՝ ըստ տարիքային խմբերի* **[5;60]**

	Ընդամենը		Քաղաք		Գյուղ	
	2015	2016	2015	2016	2015	2016
Ընդամենը	54,1	53	29,6	28,3	24,5	24,7
15–19	0,5	0,6	0,1	0,2	0,4	0,4
20-29	11,3	11,3	6,3	6,1	5	5,2
30–39	13,5	13,6	8,2	7,4	5,3	6,2
40–49	10,3	11,1	5,2	5,9	5,1	5,2
50–59	12,4	10,8	6,6	5,8	5,8	5
60–69	5,6	5,1	2,9	2,7	2,7	2,4
70–75	0,5	0,5	0,3	0,2	0,2	0,3

Հետաքրքրական է այն փաստը, որ մեր ուսումնասիրած յոթ խմբերում համեմատաբար մեծ թիվ է կազմում 30–39 տարիքային խումբը, 2015թ. կազմելով 25,0%, իսկ 2016թ.՝ 25,7% (տե՛ս աղյուսակ 2): Ցավոք մեր վիճակագրությունն ըստ քաղաքաբնակների ու գյուղաբնակների տարիքային խմբերի չունի հաշվառում բնակչության գործազրկության վերաբերյալ, որը մտածմունքի տեղիք է տալիս: Գյուղական վայրերում դա ամենախոցելի խավն է, իսկ չունենալով աշխատանք՝ ներկայիս երիտասարդը ստիպված է լինում կամ տեղափոխվել քաղաք կամ վատթարագույն դեպքում լքել երկիրը:

Ներկայումս գյուղական ոլորտի զարգացման համար մեծ աշխատանքներ են տարվում ու ցանկալի է, որ նման միջոցառումները երկարաժամկետ լինեն, որն էլ հետագայում կապահովի հավասարակշռված տնտեսություն, զբաղվածության աճ, եկամուտների աճ: Արդյունավետ ներդրումների միջոցով մենք կկարողանանք մեր աշխատուժը պահել երկրում և իրագործել ի շահ մեր պետության: Բացի այդ պետք է քայլեր կատարվեն բնակչության կողմից պետության

նկատմամբ վստահության բարձրացման ուղղությամբ: Մի կողմից «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակը, մի կողմից էլ վաղվա օրվա հեռանկարների անորոշությունն ու սեփական երկրի նկատմամբ պատասխանատվության բացակայությունը հիմք է հանդիսանում «երկիրը լքելու» գաղափարի ձևավորմանը: Եվ ներդրողները, պետական այրերը չպետք է պասիվ սպասեն գյուղական վայրերում զբաղվածության կարգավորման, և դրա արդյունավետության համար անհրաժեշտ է մշակել հիմնավորված քաղաքականություն: Անհրաժեշտ է կատարել աշխատաշուկայի և զբաղվածության տեսական և մեթոդական հարցերի խորը վերլուծություն և գյուղաբնակների զբաղվածության կարգավորման նոր մեխանիզմների կիրառում: Անհրաժեշտ է բարձրացնել հողօգտագործման արդյունավետությունը և գյուղի աշխատանքի արտադրողականությունը՝ խթանելով ագրարային ոլորտի վերընթացը: Մեր երկիրը հարուստ է տարաբնույթ դեղաբույսերով, հատապտուղներով, ազգային այլ ուտեստներով և եթե մենք մեծ գյուղերում կամ անգամ շրջկենտրոններում հիմնենք մանր կոոպերատիվներ, ապա այդ աշխատանքի նկատմամբ պահանջարկը ևս կաճի: Բոլորիս քաջ հայտնի է, որ նախկինում գյուղերում զարգացած էր գորգագործությունը. ինչո՞ւ չվերականգնել հին ավանդույթները և գյուղաբնակ կանանց ևս ներգրավել աշխատաշուկայում: Այսպիսով, խնդրի լուծման հեռանկարը իրատեսական կլինի միայն այն դեպքում, եթե պետությունը առավել ակտիվ միջամտություն ցուցաբերի գյուղատնտեսությանը ու, կիրառելով միջազգային փորձը, իրականացնի ագրարային ոլորտի ռացիոնալ բարեփոխումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ю.М. Остапенко, Экономика труда, 2-е изд., Москва 2007
2. Արցախը թվերով 2018, Ստեփանակերտ
3. Արցախի Հանրապետության ժողովրդագրական ժողովածու, 2018, Ստեփանակերտ
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով, 2010-2016, Ստեփանակերտ
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրքը 2010-2016թ., Ստեփանակերտ:

РЕЗЮМЕ

Проблема занятости сельского населения Республики Арцах

Виктория Арустамян

Ключевые слова: рабочая сила, рынок труда, занятость, безработица, скрытая занятость, жители сел.

В условиях современной рыночной экономики остро поднимается вопрос занятости сельского населения. Снижение уровня безработицы является результатом активизации экономики страны, что в свою очередь прогнозирует повышение уровня жизни населения. Все вышеизложенное обуславливает актуальность проблемы и важность ее урегулирования. В статье представлены показатели различных характеристик рынка труда, а именно: численность населения, возрастная градация экономически активного населения, работающие и безработные, принципы политики занятости, особенности рынка труда сельской местности. Была обоснована необходимость урегулирования рынка труда и предложены некоторые направления решения проблемы.

SUMMARY

The Employment Issue of the Rural Population of the Republic of Artsakh

Victoria Arustamyan

Keywords: workforce, labor market, employment, unemployment, hidden employment, villagers.

In the conditions of modern market economy the issue of employment of rural population is sharply raised. The decrease in the unemployment rate is the result of the revitalization of the country's economy, which in turn predicts an increase in the standard of the population living. All of the above leads to the urgency of the problem and the importance of its resolution. The article presents indicators of various characteristics of the labor market, namely: the population, the age gradation of the economically active population, working and unemployed, the principles of employment policy, the peculiarities of the labor market in rural areas. The necessity of regulation of the labor market was justified and some ways of solving the problem were proposed.